WIEN
Kais. Kön. Stämpel 2 Kreuzer

№ 101 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 6 1890 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 6 № 101

ՏԱՍՆ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԵՋՈՒԲ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ ՀԵՋՈՒԲԵԱՆԻ կինը և որդիքը յայտնելով նրա մահվան մասին, որը տեղի է ունեցել Կարլսբադում, յուլիսի 27-ին, խնդրում են ազգականներին և ծանօթներին ներկայ լինել պատարագին և հոգեհանգստին, որ կատարվելու է մահվան քառասներորդ օրը, կիրակի, սեպտեմբերի 9-ին, առաւօտեան $10^1/_2$ ժամին, Ջիգրաշէնի եկեղեցում։ 1—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անդրկասպեան երկրի տնտեսական զարգացումը. Նամակ Մոսկվայից. Նամակ Աղստաֆայից. Նամակ Արդահանից. Նամակ Կաղզւանից. Նամակ Կերչից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պաշտօնական յայտարարութիւն. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՈՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Զիթենու ոստը.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԴՐԿԱՍՊԵԱՆ ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Վերջին մի քանի տարիների ընթացքում Պետերբուրգում, կառավարչական բարձր շրջաններում բազմաթիւ նախագծեր են կազմվել և մշակվել Անդրկասպեան երկրի տնտեսական դրութիւնը բարելաւելու համար։

Այդ նախագծերի ընդհանուր նպատակն է եղել, որքան կարելի է զարգացնել այն միջոցները, որոնք կարող կը լինեն նպաստել երկրի բնական բերքերի և հողի մշակութեան, որպէս զի կարելի լինի օգտվել այն հարստութիւններից, որոնք թաղված են այդ հարուստ երկրի մէջ, բայց որոնք մինչև այժմ մնացել են, եթէ այսպէս կարելի է ասել, մեռած դրութեան" մէջ։

Դարերից ի վեր տեղացի ժողովուրդը՝ իր տնտեսական նահապետական միջոցներով հազիւ է կարողացել ստանալ այն հարստութեան մի տասներորդ մասը, որը կայ երկրի մէջ։ Տեղացի ժողովուրդը մինչև այժմ աշխատել է ձեռք բերել միայն այնքան, որքան պէտք էր իր առօրեայ գըծուծ կեանքի համար։ Ճանապարհների բացակայութիւնը միանգամայն ստիպում էր ժողովրդին չը մտածել իսկ այն մասին, թէ կարելի է երկրի արդիւնաբերութիւնը արտահանել և դարձնել հարստութեան մի անսպառելի աղբիւր։

Բայց այժմ, երբ Անդրկասպեան երկրի խորքերում, խաների հայրենիքում արդէն լսվում է երկաթուղու շվշվոցը, երբ երկրի մէջ արդէն սկսել են երևալ հեռագրական սիւներ՝ մտքի այդ ամենազօրեղ հաղորդիչները, հասկանալի է, որ նախկին դրութեան մէջ մնալ չէ կարող Անդրկասպեան երկիրը։ Նա պէտք է ոտք դնի կուլտուրական շըրջանի մէջ, և պէտք է խաղաղ կերպով զարգանայ, մոռացութեան տալով մօտիկ անցեալը, երբ երկրի լայնատարած դաշտերի վրա առատ արիւն էր հոսում։

Մեր ձեռքի տակ եղած տեղեկութիւններից երևում է, թէ Անդրկասպեան երկրի նոր կառավարիչը ցանկութիւն ունի առանձին ուշք դարձնել երկրի խաղաղ, տնտեսական զարգացման վրա, հիմնելով գիւղատնտեսական դպրոցներ, և լաւացնելով արդիւնաբերութեան բոլոր միջոցները։ Դա, ի հարկէ, ի միջի այլոց, նպաստող միջոցներից մէկն է։ Հարկաւոր է միայն որ գործը այնպէս դրվի, որ տեղացի, բնիկ ազգաբնակութիւնը հէնց առաջին քայլափոխից հակում, ձգտում զգայ դէպի այդ հիմնարկութիւնները, և իր որդկերանց ուղարկի այն դպրոցները, որոնց նպատակն է բարձրացնել տեղային ժողովրդի բարօրութեան աստիճանը։

Երբ Անդրկասպեան երկրի բնիկ ժողովուրդը՝ թօթափելով իրանից հնապաշտութիւնը, հաւատով և համակրանքով կը վերաբերվի դէպի երկրի բոլոր նոր ձեռնարկութիւնները և հիմնարկութիւնները, այն ժամանակ անկասկած եւրոպական կուլտուրայի մի զօրեղ հոսանք կը մտնի տեղացիների մինչև այժմ անմատչելի կեանքը, և դա կը լինի ամենազօրեղ միջոցը, որ կարճ միջոցում Անդրկասպեան երկիրը իր այժմեան վայրենի դրութիւնից դուրս գայ, և դառնայ կուլտուրական երկիր։

*

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

Օգոստոսի 25-ին

Այստեղ ձմեռվայ սեզօնը սկսված կարելի է համարել։ Թող ոչ ոք չը կարծի թէ եղանակը փոխվել է դէպի ձմեռայինը, ոչ. մենք յոյս ունենք դեռ մի ամիս, գուցէ և աւել, գեղեցիկ օրեր տեսնելու։

Ձմեռվայ սեզօնը ուրիշ բան է և ահա ինչու։ Նախ և առաջ ամեն օր փողոցով անցնելիս կը տեսնէք բազմաթիւ սայլեր բեռնաւորած կահկարասիքով.—այդ ամարանոցներից վերադարձողներն են։

Լրագիրներում բնակարան վարձով տուողների և բնակարան վարձողների յայտարարութիւնների թիւը համեմատաբար շատ է։ Ուսանողների թիւը շատանում է. քաղաքը լցվում է թէ նորեկներով և թէ հայրենիքի վերադարձողներով։ Ուսումնարանները բացվում են, ուսումն սկսվում է։ Զանազան հիմնարկութիւնների ծառայողներն էլ աւելի աշխոյժով են կպչում գործին, որովհետև ամարային թուլացնող շոգը այլ ևս չը կայ։ Մի խօսքով կեանքի զարկերակը սկսում է աւելի արագ խփել։ Շոգերից ցիրուցան եղած հասարակութիւնը խմբվում է։

Ձմեռվայ սեզօնի սկիզբը որոշող երևոյթներից մէկն էլ թատրոնների բացվելն է։ Այս տարի առաջին ներկայացումն կայացաւ օգոստոսի 15-ին Կօրշի թատրոնում։ Այս տարի Մոսկվայում, ինչպէս և անցեալ տարի, հինգ թատրոններ ներկայացումներ են տալու։ Այդ հինգ թատրոնները հետևեալներն են. մեծ թատրոն, փոքր թատրոն, Կօրշի թատրոն, Գօրեվայի թատրոն և Գօրեվայի ժողովրդական թատրոն։ Առաջին երկու թատրոնները թագաւորական են, իսկ մնացած երեքը մասնաւոր մարդկանց է պատկանում։ Մեծ թատրոնում լինում է օպերա և բալէտ, իսկ մնացածներում դրամատիկական պիէսաներ են տրվում։

Ուշադրութեան արժանի է այդ հինգ թատրոններից մանաւանդ Գօրեվայի ժողովրդական թատրոնը։ Որպէս զի այդ թատրոնը ոչ միայն անունով ժողովրդական լինի, այլ և գործով, այսինքն նրա յաճախողների գլխաւոր կօնտինգենտը ժողովրդի հասարակ և միջին դասը լինի, Գօրեվան երկու միջոցի է դիմել. առաջին՝ բեմի վրա կը դնվեն հասարակ ժողովրդի մտքին հասկանալի պիէսաներ, որոնց բովանդակութիւնը վերցրած կը լինի առօրեայ կեանքից. երկրորդ՝ տեղերի գինը, համեմատած այլ թատրոնների հետ, բաւական էժան է։ Այդպիսով թատրոնը հասարակ ժողովրդի թէ մտքին և թէ գրպանին մատչելի կը լինի։ Եթէ գործի աջողութեան մասին դատենք առաջին ներկայացումով, պէտք է սպասել, որ Գօրեվան նպատակին կը հասնի։

Մի քանի խօսք էլ սանիտարական դրութեան մասին։ Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ լոկ դեղերով չէ կարելի բժշկել ոչ մի հիւանդութիւն, եթէ հիւանդը հակաառողջապահական պայմաններում է ապրում, վաղուց ի վեր քաղաքների սանիտարական դրութիւնը քաղաքի ուշադրութիւնն է գրաւել։ Յիրաւի, Եւրոպայում և առհասարակ այն տեղերում, ուր քաղաքակրթութիւնը ոտք է դրել, մեծ նշանակութիւն են տալիս այն հակաառողջապահական պայմաններին, որոնք հիւանդութիւնների պատճառ են դառնում և աշխատում են այդ վնասակար պայմանները հեռացնել, կամ նրանց ազդեցութիւնը մեղմացնել։ Աշխատում են, որ օդը մաքուր լինի՝ բուսականութիւնը զարգացնելով և այլ միջոցների դիմելով, ջուրը առողջարար լինի և դրա համար ահագին գումարներ են մսխում, եթէ տեղը ջուր չը կայ, հեռու տեղերից բերել տալու համար։ Ահագին գումարներ են մսխում որպէս զի կանալիզացիայով քաղաքի անմաքրութիւնները հեռացնեն և եթէ կարելի է այդ անմաքրութիւնները օգտակար դարձնեն։ Առանձին հսկողներ են պահում, որոնք պէտք է հսկեն շուկայ բերած կենսական մթերքների վրա և թոյլ չը տան հնացած, անպէտք և առհասարակ վնասակար մթերք ծախելու։

Բայց ներկայ ժամանակներում այդ բարի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԶԻԹԵՆՈՒ ՈՍՏԸ

(ժողովրդական աւանդութիւն)

I

Շատ տասնեակ տարիներ են անցել այն օրից, և այն, ինչ որ ես ձեզ հիմա պատմելու եմ, լոկ աւանդութիւն է, որը պատմվում է Շ. գիւղում։

Ամեն մարդ պատրաստութիւն էր տեսնում և իրաւունք ունէր։ Այդպիսի օրեր հայ գիւղացին իր կեանքում շատ քիչ է տեսնում։ Արդարև, քանի՞ օր կայ տարվայ մէջ, երբ հայ գիւղացիները՝ առանց սեռի ու հասակի խտրութեան ուրախ լինեն, կամ գէթ, եթէ այդպէս «լինել» չէ աջողվում, աշխատեն այդպէս «երևալ»։ Չէ՞ որ այդ լինում է կամ Ծննդեան կամ Յարութեան տօներին։

Ուրեմն ինչ զարմանք, երբ Զատկի տօնից մի շաբաթ առաջ ամբողջ Շ. գիւղը մի տեսակ տենդային դրութեան մէջ էր։

Կաթ, մածուն, եօթնագոյն ներկած, գրոտած, նաշխոտած ձուաներ... Ամեն ինչ պատրաստ էր Զատկի համար։ Կալերում և կտուրներում մայելով վազվզող զոհաբերութեան գառներին էլ թիւ ու սահման չը կար։ Կայէն բերդի աւերակներից ներքև նայողի առաջ տարածվում էին ջանասէր գիւղացիների արտերը, որոնք գարնան մեղմ ու թեթև հողմի հետ մեղմ ծփում, սօսին էին անում, օրօրվում, կամ ինչպէս շատերն ասում են «չւում էին»։

Եւ ինչպէս չուրախանայ մարդ, երբ նրան շըրջապատող ողջ բնութիւնը կեանք է ստացել, ցընծում, ուրախանում է։ Ինչո՞ւ տխրի գիւղացին, երբ առաւօտեան աղամամութից սկսած մինչև երեկոյեան ժամզարքը ողջ բնութիւնը արտայայտում է իր բերկրութիւնը հազարաւոր լեզուներով։ Բայց այնու ամենայնիւ կան մարդիկ, որոնք ոչ կարող են ուրախ լինել և ոչ էլ կարող են իրանց ուրախ ցոյց տալ։ Ահա՛ այդպիսի մարդկանցից մէկն էր և որսկան Աթանը։

Ո՞վ է այդ որսկան Աթանը։ Ով որ եղել է Շ. գիւղում, անկասկած նրան ճանաչում է, որովհետև այնտեղ նրան ճանաչում են մեծ ու մանուկ։

Ասում են, որ որսկան Աթանը շատ զուարթ և կենսուրախ մարդ էր։ Քահանայ, իշխան, տանուտէր, հեռաւոր, հարևան... ամեն մարդ նրանից հիւրասիրված էր պատուական որսի մսով։ Նա ամենաճարպիկ և ամենաբաղդաւոր որսորդներից մէկն էր։ Բայց նա հասարակ որսորդներից չէր, որոնց նմանը ամեն տեղ ճարվում է։ Եթէ նա տեսնէր մի եղջերու ջուր խմելիս, կամ իր հորթուկին կաթը տալիս, թող նա ամբողջ օրը դատարկ շրջած լինէր, մեծ տմարդութիւն կը համարէր հրացանը բարձրացնել։ Իր կեանքում նա եղջերուի անչափահաս հորթուկ չէր սպանած։ Պատմում են, որ մէկ անգամ մի այծեամն է սպանած լինում, որի ստինքից կաթն էր թափվում, ուրեմն, մի նշան թէ նա մայր է եղած. դրա վրա որսկան Աթանը եօթը շաբաթ պաս արաւ որսի գնալ։

Հազարաւոր կռիւների մէջ էր մտած, հազար վտանգներից նա անվնաս էր եղած, թէև ունէր բազմաթիւ աննշան սպիներ, քաջութեան դրոշմները... Բայց և ոչ մէկը չէր գտնվի, որ ասէր, թէ որսկան Աթանը երբ և է անմեղ մարդու արիւն թափած լինէր։ Այդպէս որսկան Աթանը ողջ Շ. գիւղում ամենքի սէրն ու յարգանքը վայելում էր և երջանիկ ապրում իր կին Սօնայի հետ միասին։

II

Բայց մարդս երբէք չէ կարող երկար երջանիկ ապրել, եթէ այդ չեն կամենում նրա հարևանները։ Աթանի հարևանները վերջը շատ խանդոտ աչքով էին նայում նրա երջանկութեան վրա. ուստի բամբասասէր կանայք սկսեցին նրա ընտանիքի մասին անպատուաբեր լուրեր տարածել։ «Մինչ որսկան Աթանն անտառներումն է որս որոնում, նրանից աւելի խելօք որսորդներ կան, որոնք նրա այծեամնի վրա են պտտվում...» ասում էին մէկ մէկու մէջ հարևանները։ Եւ այդ խեղճ այծեամն էր որսկան Աթանի կին Սօնան, որի վրա իբրև աչք ունէին երկու երիտասարդ։

Շատ և շատ տխրեց որսկան Աթանը, բայց նա չը գիտէր, թէ ինչպէս այդ չար լեզուանիներից ազատվէր։ Սկզբում նա այնքան ուշադրութիւն չը դարձրեց այդ կանանց բամբասանքների վրա, որովհետև «քամին քարից ոչինչ չէր կարող պոկել», իսկ նրա Սօնայի հաւատարմութիւնը ժայռից էլ ամուր և հաստատ էր։ Բայց երբ շատ երկար տարուբերվելուց յետոյ մտածեց թէ՝ հողմահարվելով հաստաքարն էլ խիճ է դառնում, եկաւ այն եզրակացութեան, որ ընտանեկան խաղաղութեան և պատւի համար անհրաժեշտ է, որ այդ կասկածաւոր մարդիկ մէջտեղից վերանան։ Այդ գործը որսկան Աթանի համար ամենևին դժուար չէր. դժուարն այդ եզրակացութեան հասնելն էր, որը նրան շատ և շատ անհանգստութիւն և անքուն գիշերներ պատճառեց։ Վերջապէս մի անքուն գիշեր էլ և... երկու երիտասարդները այլ ևս չը կային։

Տարակուսանքի մէջ էր ժողովուրդը։ Եւ ո՞վ չէր տարակուսի, ո՞վ չէր կասկածի Աթանի մասին։ Եթէ նա սպանած էլ չը լինի, հաւանականաբար նրա մատը այդ բանի մէջն է, մտածում էին շատ շատերը։ Բայց ինչպէս։ Նա որ իր կեանքում մի մրջիւն իզուր տեղը կեանքից չէր զրկած, ասելով «այս աշխարհը շատ լայն է, ամենի համար տեղ ու ապրուստ է տուել Աստուած...» Աթանն ուրեմն ինչպէս կարող էր երկու անմեղ մարդու կեանքը խաւարացնել՝ լոկ կասկածելով... Բայց արդեօք կասկած էր. արդեօք բամբասանք էր թէ իրողութիւն, ինչ որ պատմում էին հարևանները։ Արդէն լուսի պէս պարզ էր, գոնէ այնուհետև, որ այդ «ասուլխը» չար լեզուանիների մտքի չար արտադրութիւն էր, այլապէս որսկան Աթանին ինչո՞ւ պէտք է այնքան հալումաշ անէր յուսահատութեան դառն թախիծը։

Իրա՛ւ. որքա՛ն տխուր էր Աթանը. որքա՛ն հալվել ու մաշվել էր նա... Անդառնալի կորել էին նրա ուրախ-զուարթ ասել-խօսելը. թառամել էր նրա քաղցրաժպիտ դէմքը։ Առաջվայ կենսուրախ որսկան Աթանի լոկ կմախքն էր մնացել։ Շատ վաղուց պատից կախած՝ արդէն ժանգոտել է նըգործը բազմաթիւ խոչընդոտների է հանդիպում: Առաջին՝ որ այդ գաղափարը չէ տարածված ժողովրդի մէջ և երկրորդ խոչընդոտը՝ այդ նեղ եսական և հասարակական ինտէրեսի ընդհարումն է: կամ մարդիկ, որոնք իրանց կոպէկը բարձր են դասում հազարաւոր մարդկանց կեանքից: Դրանց համար ոչինչ չէ նշանակում իմանալով, դիցուք իրանց ծախու մսի փտած լինելը, ապրանքը նաղդացնելու համար, ծախել և պատճառ դառնալ առնողների հիւանդութիւններին: Նոյն իսկ այնպիսի մարդիկ, որոնք միլիոնի առևտուր ունեն, չեն ամաչում անուշադիր թողնել մաքրասիրութեան տարրական պահանջները: Դրա ապացոյց կարող է լինել հետևեալը:

Յունիս ամսվայ միջոցին Մոսկվայի ոստիկանութիւնը բժիշկների հետ րէվիզիա անելով մօտ 1000 հացթուխների, մսավաճառների և մանրավաճառների խանութները՝ գտել են, որ 30 խանութպաններ չէին կատարում սանիտարական տարրական պահանջներն անգամ. օրինակ յայտնի «Սիու և ընկ.»-ի գործատունը գտել են կեղտոտ ծխակալած, սենեակի անկիւնները սարդի ոստայնով, պատած, վարագոյրները կեղտոտ. դա եղել է առաջնակարգ գործարաններում, երևակայեցէք թէ ինչ կը լինի ուրիշների, մանաւանդ մանրավաճառների մօտ: Օրինակ՝ մի հացթուխի մօտ ալիւրում որդներ են գտել, ջրամանը, ուսկից ջուր են վերցնում խմորը հունցելու համար, այնքան կեղտոտ է եղել, որ ջուրը կանաչել է, ջրի մէջ կտոր կտոր աղիս և կիր են գտել: Մսավաճառների խանութները աւելի վատթար դրութեան մէջ են եղել. մէկտեղ 4 պուդ փտած ձուկ են գտել, միւս տեղում մօտ 1 պուդ փտած զարշահոտ միս են գտել, որի մէջ որդները խլխլում են եղել: Պէտք է ասել, որ այդպիսի խանութներից առնողները գլխաւորապէս հասարակ բանւոր դաս է լինում, որը առանց այն էլ հակաառողջապահական պայմաններումն է ապրում: Ի՞նչ ասել կուզէ, որ այդ առողջապահական տարրական պահանջները չը կատարողները ստիպված են դատարանի առաջ պատասխան տալ:

Ա.

ՆԱՄԱԿ ԱՂՍՏԱՖԱՅԻՑ

—

Սեպտեմբերի 2-ին

Գանձակի նահանգական դատարանը ապօրինի և անվաւեր համարելով սահմանորոշ պաշտօնեայի կազմած արձանագրութիւնները, որոնցով նա Աղստաֆայում և Ղազախում գտնվող բոլոր հողերը գրել էր որպէս սեպհականութիւն զանազան բեկերի՝ կարգադրեց մի և նոյն պաշտօնեային կրկին այդ հողերը չափել, և այս անգամ ոչ առաջվան պէս առանց ոչ ոքին իմաց տալու, այլ վաղօրօք թէ ծանուցագրերով բոլոր կալուածատէրերին իմաց տալով իր չափել սկսելու օրը, և թէ պատերին յայտարարութիւն կպցնելով:

Այդպէս էլ արեցին: Սակայն պաշտօնեայի հետ միասին եկել էին նաև Ղազախի բէկերը, որոնցից շատերը յայտնում էին իրանց իրաւունքները զանազան մարդկանց կայքերի վրա: Նրանք յայտնում էին, որ այդ հողերը ծախելու ժամանակ իրանք բաժանված չեն եղել միմեանց մէջ պաշտօնապէս, և իրանցից եթէ մէկը ծախել է մի կտոր հող, առանց իրանց բոլորի համաձայնութեան իրաւունք չէ ունեցել: Բէգերի մէջ կային այնպիսիները, որոնք եղբայրներ էին. դրանք ունեցել են հայրական հողեր, որոնք առաջուց իրանց մէջ բաժանված տիրապետում են եղել և յետոյ իւրաքանչիւրը ծախել է իր բաժինը. բայց որովհետև այդ մասերը օրինաւորապէս բաժանված չեն եղել, այժմ ամեն մի եղբայր միւս եղբօր ծախածը ապօրինի է համարում և յայտնում է իր իրաւունքը այդ հողերի վրա:

Հողային այդպիսի հարցերի ժամանակ թուրք «աղալարները» միմեանց պաշտպանում են:

Օրինակ, մի գանձակեցի, որ այժմ Բագւում է լինում, այստեղ տներ ունի շինած իր սեփական հողի վրա, որի վրա ծախսել է մի քանի հազար ռուբլի: Բացակայ լինելով այստեղից նա, ի հարկէ, չէր կարող իմանալ այստեղի անցած դարձածի մասին և ահա պաշտօնեայի հարցին մի բէկ յայտնում է փառաւորապէս, որ այդ տեղը «աթաղան-բաբաղան» իրան է պատկանում. այդ տներն ինքն շինել է տուել և կապալով տուել: Բոլոր աղալարներն էլ վկայութիւն են տալիս, որ ճիշդ է. այդպէս էլ գրեցին:

Նոյնը պատահեց Թիֆլիսեցի եղբ. Թումանեանների և մի քանի ուրիշների տեղերի հետ, որոնց տէրերը բացակայ էին:

Աբ. Ապ.

ՆԱՄԱԿ ԱՐԴԱՀԱՆԻՑ

—

Օգոստոսի 27-ին

Ամսիս 16-ին եկաւ Արդահան մեր ժողովրդական երգիչ Ջիւանը և դեռ ևս այստեղ է:

Արդահանցիների նման համարեա որ և է հոգեկան մխիթարութիւն տուող միջոցների կարօտ մի ժողովուրդ գրկաբաց ընդունեց իր սիրելի երգչին, որի ներկայ լինելու լուրը արագութեամբ տարածվեց բոլորի մէջ և արդէն երեկվանից սկսեց ժողովուրդը բազմութեամբ յաճախել այնտեղ, ուր նստած երգում էր նա, և ուշադրութեամբ լսում էր նրա երգերը և երաժշտութիւնը, որը կազմված էր համեստաբար իր երկու ընկերների աջակցութեամբ: Լսողների կողմից արտայայտված ուրախութեան ու համակրութեան ցոյցերը զգալի էին, որով աւելի ևս ոգևորված էր երգում երգիչը:

Անցեալ կիրակի, երեկոյեան, միացած քսան և չորս անձինք ի պատիւ Ջիվանիի ճաշ տուեցին, որտեղ նա երգում էր և միանգամայն մասնակցում էին հայ աստիճանաւորներ և հայ-կաթոլիկներ: Պ. Ջիվանը աւելի վեհ գտնվեց, որովհետև նա ձրիաբար մի երաժշտական երեկոյթ տուեց երէկ երեկոյեան ուսումնարանի դահլիճում, յօգուտ ուսումնարանի և ինչպէս անտրակտի ժամանակ երեցփոխ պ. Սիրունեանց բեմից յայտնեց ժողովրդին, արդէն գոյացել է զուտ արդիւնք 67 ռուբլի և մի քանի կոպ.: Մուտքը մատչելի գնով էր նշանակված—մի ռուբլի և 50 կոպ.: Դահլիճը լսողներով կատարելապէս լի էր, ուր եկած էին շատերը իրանց ընտանիքներով, այնպէս որ դահլիճի մի երրորդ մասը գեղեցիկ սեռն էր բռնած, որոնք նստած էին առանձին մի դաս: Երգերը բոլորը հայերէն լեզուով էին, լսողներն էլ բնականաբար բոլորը հայեր էին, ուրիշ ազգից չը կար: Լսողների մէջ գտնվում էին հայ աստիճանաւորներ և հայ-կաթոլիկներ: Մեծ ուշադրութեամբ էին լսում բոլորը և ոգևորված ծափահարութեամբ յայտնում էին իրանց զգացմունքները ժողովրդական բանաստեղծին, նրա յօրինած երգերը իր բերանից լսելով:

Արդահանում այս տարի խոտը շատ սակաւ է: Երկրագործը շուարած է, թէ ինչ պիտի անի իր անասունների աւելորդի հետ, որոնք գին չեն անում, կամ լաւ ևս ասել գնող չը կայ. իսկ իր խոտը ձմեռը չի բաւականանայ, որ նրանց մինչև գարնան դուրս բերի: Խոտի սակաւութիւն զգացողը միայն տեղացի երկրագործը չէ, այլ նաև զգալի եղաւ մշակների համար: Սովորաբար խոտի հունձի ժամանակ, յուլիսի սկիզբներում, ձորեբից—Արդանուչից և Շավշէթ-Իմերխէվից—հազարաւոր մշակներ «թրփանջիներ» թափվում են տափաշխարհ—Արդահան, Գէօլա, Չլդըր և այլն և մինչև խոտի հնձի ժամանակն անցնելը աշխատում են «դեզգահ-դեզգահ» խոտ հնձելու և լաւ օրավարձ են ստանում, այնպէս որ մի ամսվայ միջոցին վերադառնալիս իւրաքանչիւրի ծոցում գտնվում էր 30—40 ռուբլի առնուազն, որը երբեմն համարեա ամբողջապէս թողնում են Արդահանում առևտուր անելով և կամ հետերը տանելով վճարում են իրանց պետական տուրքերը: Սակայն այս տարի նրանցից շատերը գործ անգամ չը գտան և գիւղից գիւղ մանգալուց յետոյ դատարկ ձեռքով վերադարձան տուն: Ոմանք մինչև անգամ կէս ճանապարհից յետ դարձան: Գործ գտնող «թրփանջիները», որոնք բնականաբար շատ ցած օրական ստանալով կարճ ժամանակ կարողացան գործ շարունակել, հազիւ ձեռք բերին մի քանի ռուբլի: Այս անաջողութիւնը ի զերև հանեց Արդահանի առևտրականների յոյսերը, որ «թրփանջիների» վրա ունէին, որովհետև չը կարողացան նրանցից օգտվել, ինչպէս ուրիշ տարիները:

Ց. Գ.

ՆԱՄԱԿ ԿԱՂԶՈՒԱՆԻՑ

—

Օգոստոսի 26-ին

Կաղզուանից դէպի հարաւ, 20 վերստաչափ հեռու՝ գտնվում է Թաթլոյ և Վարոսի—այլապէս ասած «Վարդիհեր» վանքը, որտեղ տարին մի քանի անգամ ուխտ են գալիս զանազան տեղերից բազմաթիւ հայեր: Բայց ամենամեծ բազմութիւն լինում է Վարդավառին, երբ Ալաշկերտից ևս բազմաթիւ հայ ընտանիքներ գալիս են ուխտ: Հետաքրքրվելով տեսնել այդ հինաւուրց սրբավայրը, Աստուածածնի տօնին, ի թիւս այլ ուխտաւորների գնացի յիշեալ վանքը: Կաղզուանից սկսած՝ ճանապարհի մեծ մասը հարկաւոր է լինում բարձրանալ լեռների վրա և անցնել մի նեղ շաւղով, որի կողքին տարածված է անդնդախոր ձորը: Մի անզգոյշ քայլ ձիու կողմից և դուք ռիսկ էք անում գլորվել այդ անդունդը: Աւանդութիւնից յայտնի է, որ Կաղզուանը և այդ ամբողջ լեռները մի ժամանակ ծածկված են եղել անտառով. մինչև անգամ պատմում են, որ Կաղզուանի հնագոյն տների ծածկը—որոնք մինչև այժմ դեռ կանգուն են—այդ անտառի փայտերից է: Բայց տեղացի ժողովրդի անխնայ և աւերիչ վարմունքը այսօր սպառել է այդ անտառը, և այժմ նախկին բարձրաբերձ ծառերի փոխարէն այս և այնտեղ երևում են աննշան, ցանցառ թփեր: Միայն Վարդիհերի հովտում այդ թփերը խառնվում են, երևում են միջակ բարձրութեան ծառեր և ահա այդ ոչ մեծ տարածութիւնը կրում է բարձրահնչիւն անտառ անունը.... Մեր ճանապարհը անցնում էր բարձրակատար լեռների վրայով:

Վերջապէս ահա և հռչակաւոր վանքը: Ընդարձակ ձորում, տափարակի վրա երևաց եկեղեցու անպաճոյճ շինութիւնը: Ուխտաւորները արդէն զետեղվել էին, մեծ մասամբ, եկեղեցու շուրջը: Այդտեղ կային և ախալքալաքցի, և ալէքսանդրապօլցի, և կարսեցի և կողբեցի ուխտաւորներ: Մենք գտնվում էինք տաճկաց սահմանին շատ մօտ, մեր առաջ տարածվող լեռների միւս լանջը պատկանում է թիւրքիային: Մեր հասնելուց փոքր ինչ յետոյ՝ երբ արևը նոր էր մայր մտել՝ աղաղակելով երեք հայ լեղապատառ ընկան ուխտաւորների մէջ: Յայտնվեց, որ դրանք եօթը հոգի են եղել և գնում են եղել տուն, բայց մեզանից 2 վերստ հեռուն՝ ճանապարհի վրա թաքնվող քիւրդերը ուզեցել են նրանց սպանել. երեքը ազատվեցան մեզ մօտ փախչելով, իսկ միւս չորսը մնացել էին լեռների մէջ:

Հասաւ և գիշերը: Խարոյկները ամենուրեք վառվեցին: Զուռնայի ուրախ հնչիւնների ազդեցութեան տակ պարում է արբած ալէքսանդրապօլցին, բայց մի անբարբառ վիշտ տիրում է բոլորին: Իւրաքանչիւր ոք մտածում է. ինչ կը լինի ուխտաւորների դրութիւնը՝ եթէ շրջապատող բարձր լեռներից քրդերը հրացաններ արձակեն:

Փակված ձորի մէջ, ունենալով ընդամենը 4—5 հրացան և մի քանի սահմանապահ զինուորներ ու չափարներ՝ ուխտաւորները կարող էին ենթարկվել կոտորածի:

Արշալոյսը բացվում էր՝ երբ եկեղեցու ժամասացութիւնը սկսվեց: Եկեղեցու հարաւային պատի մօտ մի խորշում գտնվում է սուրբերից մինի

րա որսորդական հրացանը: Որսկան Աթանը հրաժարվել էր առմիշտ հրացան ձեռն առնելուց, որսի գնալուց: Ոմանք ասում էին թէ այդ փոփոխութեան պատճառն այն է, որ որսկան Աթանն է այդ երիտասարդների մահվան պատճառը, ուրիշները—թէ ժողովրդի կասկածն է նրան տխրեցնում: Նոյն իսկ նրա Սօնան հաստատ ոչինչ չը գիտէր, որովհետև «կնոջ գործն է տունն աւլել, վեր քաղել, սրբել, եփել, թխել, ձևել, կարել, կարկատել... բայց ոչ տղամարդիկների գործի մէջ խառնվել, մանաւանդ համարձակվել ամուսնուց գաղտնիք իմանալ... կնոջ մազն երկայն է, խելքը կարճ...»: Մէկը մօտենում էր և մտերմաբար հարցնում.

—Ասա, Աթան, դու այդ բանում խառն ես, թէ ոչ:

—Ի՞նչ ես կարծում, կարող եմ լինել—հարցնում էր իրան կողմից որսկան Աթանը:

Եթէ հարցնողը բացասական պատասխանի էր սպասում, ասում էր. «Եթէ չես հաւատում, ուրեմն մի հաւատայ», իսկ եթէ նա կասկածում էր, ապա Աթանն ասում էր. «Եթէ հաւատում ես, ուրեմն ինչու չէ կարող լինել»: Այսպիսով թէև նա ազատվում էր ուրիշներից, բայց իր ներքին տանջանքը դեռ ևս շարունակվում էր:

III

Որսկան Աթանի չարչարանքը տևեց մինչև Չարչարանաց շաբաթը: Էլ տանել չէր կարելի. իսկ Աթանը պէտք է հաղորդվէր և դրա համար ստիպված էր խոստովանվել: Իսկ չը հաղորդվել և չը խոստովանվել՝ ժողովրդի համար նոյնն է թէ հրապարակով խոստովանել իր յանցաւոր լինելը: Բայց Աթանն ինչպէս գնար ասէր, որ ինքն երկու անմեղ մարդու արիւն է թափել: Օ՛... այդ անկարելի է: Աթանի լեզուն չէր զօրիլ այդ ասելու: Այն ինչ Աթանը ոչ գիշերը քուն ունէր, ոչ ցերեկը հանգստութիւն: Բայց երկար մտածելուց յետոյ՝ նա տեսաւ, որ այդ ծանր բեռան տակից դուրս գալու միայն մի ելք է մնում—խոստովանութիւն:

Մէկ օր էլ երկար մտածելուց յետոյ որսկան Աթանը երեսը խաչակնքեց, երեք անգամ «Տէր, Դու փրկես, ազատես» ասեց և ճանապարհ ընկաւ դէպի եկեղեցի: Նա կիսաճանապարհին մնաց կանգնած. ծնկներն սկսան դողդողալ և շուտով վայր կընկնէր, եթէ պատին չը յենվէր: Մի փոքր շունչ առնելուց յետոյ՝ նա մեռելադունած տուն դարձաւ: Սօնան բոլորովին յուսահատ էր: Նա իսկոյն վազեց տէր-Խաչանի մօտ, որն՝ ըստ իր սովորութեան, առնելով մասնատուփն ու աւետարանը, շուտով հասաւ Աթանին: Վերջինս պառկած էր անկողնում:

—Բարի օղջոյն, Աթան, Աստուած առողջութիւն տայ, ինչպէս ես: Չես ամաչում, անկողին ես մտնում և այդպիսի հանդիսաւոր օրերին թէ ամուսնիդ և թէ հարևաններիդ տխրեցնում—նկատեց տէր հայրը մտերմաբար: Բայց երբ մօտից տեսաւ Աթանի դալուկ դէմքը, երկիւղից ինքն էլ գունատվեց:

Աթանը տէր հօր աջը սեղմելով իր ձեռներում, համարեա լալով, բացականչեց.—Տէր հայր, ես այրվում եմ, ես տանջվում եմ, խոստովանեցրու ինձ, ես մեռնում եմ... Ապա դառնալով իր ամուսնուն՝ նշան արաւ, որ նա դուրս գնայ: Սօնան հնազանդվեց ամուսնու հրամանին և երկու ձեռով ծածկելով իր արտօսրաթոր աչերը, հեկեկալով դուրս եկաւ հարևան սենեակը:

—Տէր հայր—շարունակեց Աթանը՝ տէր-Խաչանի աջը իր դալուկ չրթունքներին մօտեցնելով.—ինչ պատիժ նշանակելու ես, ասա, ես պատրաստ եմ: Բոկոտն ես աշխարհ աշխարհ կը թափառեմ, կեանքիս մնացորդը Երուսաղեմի ճանապարհին կը մաշեմ, ես կաթիլ-կաթիլ կը մեռնեմ, ինչպէս կաթիլ-կաթիլ նրանք... չէ, սիրտս էլ չէ խփում, գլուխս այրվում է. աչքերս խառնված են, քունը բոլորովին փախել է աչքիցս. գիշերները սարսափելի երազներ ինձ տանջում են. աչքիս առաջ միշտ սուր, հրացան, արիւն ու դիակներ են երևում... Ասա, տէր հայր, մեր սուրբ եկեղեցին մարդասպանին ինչ պատիժ է նշանակում... Աթանը լռեց. նա երկու ձեռով ամուր սեղմեց տէր-հօր աջը և աչերը յառեց նրան:

—«Տէր, փրկեա զմեզ ի փորձութենէ» բացականչեց տէր-Խաչանը սարսափած. և անդադար կրկնում էր մեքենայօրէն նոյն նախադասութիւնը, մինչև որսկան Աթանը նորոգեց իր հարցը.—Ասա, տէր հայր, ինչ պատիժ է նշանակում մեր եկեղեցին մարդասպանին. ես մարդասպան եմ, ես երկու մարդու անմեղ արիւն եմ թափել...

—«Տէր փրկեա զմեզ ի փորձութենէ»... կրկնեց տէր-Խաչանը, իր արտասուքով լուացած աջն իրան քաշելով:

Այժմ տէր-Խաչանի համար շատ բան պարզ էր: Նա արդէն գիտէր ովքեր էին այդ երկու անմեղ զոհերը: Բայց նա նորից ընկաւ մտածութեան մէջ. Վերջապէս երբ իր աչքերը հանդիպեցան Աթանի հարցական դէմքին ու աչքերին, նա բաց արաւ բերանը.—Աստուած չէ կամենում մեղաւորների մահը, այլ դառնալը չար ճանապարհից. բայց և այնպէս մարդասպանին ներելը իմ իշխանութիւնից վեր է: Երկու դալար կեանք գրկել ես. երկու ծառ չորացրել, եթէ չոր ոստը կը դալարի, այնպէս էլ քո հոգուն փրկութիւն կը լինի...

—Ո՛հ, սարսափելի է, տէր հայր, խիստ է, շատ խիստ է... աղաղակեց որսկան Աթանը.—Ջո՛ւր, ջո՛ւր... այրվում եմ... ջուր...

Աթանն ուժասպառ ընկաւ բարձի վրա և աչքերը փակեց: Այդ աղաղակի վրա հարևան սենեակից ներս վազեց Սօնան հեկեկալով: Բայց տէր-Խաչանը նկատեց, որ լացն ու աղաղակը հիւանդին աւելի կը նեղացնեն, ուստի հրամայեց նրան լռել և հիւանդի ճակատին սառն [illegible] կապել: Տէր-Խաչանն իր ձեռով կապեց, հիւանդին պառկեցրեց և երկար ժամանակ մոլորված անկողնի մօտ նստելուց յետոյ՝ մի քանի պատուէր տուեց Սօնային հիւանդի վերաբերեալ և դանդաղ քայլերով հեռացաւ՝ անդադար կրկնելով քթի տակ սովորական «Տէր փրկեա զմեզ ի փորձութենէ»:

(Կը շարունակվի)

հանգստարանը. մի այլ գերեզման գտնվում է մի աւանդատան մէջ։ Խաչկալը շինված է փայտից՝ անճաշակ քանդակներով զարդարած և անճոռնի գծերով ներկած։ Եկեղեցու բոլոր սպասները բերում են շրջակայ հայ գիւղերից և պաշտօնատար քահանան տանում է իր հետ. վանքը մնում է դատարկ։ Կառավարութեան տնօրինութեամբ՝ վանքին որոշ քանակութեամբ հող է յատկացրած. մտադրութիւն կայ միաբանութիւն հաստատել այդտեղ։ Միայն թէ դժբաղդաբար, այդ չէ կարող շուտ կատարվել, որովհետև շրջակայքի բազմաթիւ քիւրդերը կարող են աւերել բոլորը։—Չը մոռանանք ասել, որ այս անգամ ոչ մի հայ չէր եկած Թիւրքիայից։

***

ՆԱՄԱԿ ԿԵՐՉԻՑ

Օգոստոսի 27-ին

Յայտնի է, որ Ղրիմից մրգերի ահագին քանակութիւն է արտահանվում դէպի Ռուսաստանի և արտասահմանեան զանազան քաղաքներ, բայց հազարաւոր պուդեր խակ կամ ժամանակին անցած մրգերի վաճառւում են առանց մի որ և իցէ օգտի այգետէրերի համար։ Հաւանական է, որ այդ վնասին շուտով վերջ կը տրվի։ Այգետէրերի մէջ լուր է տարածվել, որ արդէն կազմվել է արտասահմանեան մի ընկերութիւն 900 հազար ֆրանկ դրամագլխով, Սիմֆերոպոլի գաւառի հարաւային մասում հիմնելու մի գործարան Ղրիմի մրգերից շինած օղիից կօնեակ պատրաստելու համար։ Եղած փորձերը աջող հետևանք են ունեցել։

Հաստատ աղբիւրներից իմանում ենք, որ ընդհանրապէս այս տարի Ղրիմում ցորենի հունձը վատ է։ Կերչի շրջակայքում մի դեսեատին հողից ստացվել է 35 չետվերտ գարի և վարսակ, իսկ ցորեն նոյնքան հողից 28 չետվերտ. Սիմֆերոպոլի շրջակայքում 2—3 չետ. մի դեսեատինից։

Ցորենի առևտուրը արդէն սկսվել է. չետվերտը վաճառվում է ամենալաւ ցորենի 9 ր. 20 կոպէկ —10 րուբլի։ Կերչի նեղուցի մաքրվելը վերջացած լինելով ֆրանսիական ընկերութեան ձեռքով, այս տարի անհամեմատ շատ շոգենաւեր են գալիս և մտնում Ազովեան ծովը։

Ազովեան ծովի առագաստաւոր կաբօտաժի տէրերը անբաւականութիւն են յայտնել նրա համար, որ ի նկատի առնելով առագաստաւոր կաբօտաժի ներկայ վերին աստիճանի վատ դրութիւնը՝ սահմանափակ կարգադրութիւն լինի ապրանքների շոգենաւային կաբօտաժի նաւերով տեղափոխման համար։ Այսպէս օրինակ, առագաստատէրերը ցանկանում են, որ մի քանի ապրանքների տեղափոխումը, ինչպէս՝ աղի, փայտի և այլոց, լինի բացառապէս առագաստաւոր նաւերով, այլապէս առագաստաւոր կաբօտաժն կորած է։

Մօտերքս Կերչի նոր գերեզմանատան մօտ պատահմամբ յայտնվեց մի հին գերեզման։ Դագաղը ամփոփված է եղել սարկօֆագի մէջ։ Դագաղը, որի մէջ թաղված է մի օրիորդ, ըստ երևոյթին, և որի մազերը ցարդ անվնաս պահպանվել են, 1,500—1,900 տարվայ են համարում։ Առայժմ քաղաքի թանգարանումն է պահվում, բայց շուտով Պետերբուրգ կուղարկեն։

Շուտով Կերչ կը գայ հարաւային մեծ քաղաքների սիրելի դերասան Կազանցեվ, որը պայմանաւորված է մի տարով. խմբի մէջն է և յայտնի դերասանուհի Լատար։ Ներկայացումները սկսվելու են սեպտեմբերի 28-ից։

Ե. Վ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ֆինանսների մինիստրի Բագու գալու մասին, մեզ գրում են Բագուից հետևեալը. «Պ. Վիշնեգրադսկի կիրակի օր, սեպտեմբերի 2-ին հասաւ Բագու։ Երկաթուղու կայարանում նրան դիմաւորեցին նահանգապետը, քաղաքագլուխը, ձայնաւորները, տեղական արդիւնաբերողների ներկայացուցիչները և մեծ բազմութիւն։ Նոյն օրը պ. մինիստրը իջաւ նահանգապետի բնակարանում, և ընդունեց զանազան հիմնարկութիւնների ներկայացուցիչներին։ Յաջորդ օրը պ. Վիշնեգրադսկի զբաղվեց նաւթային արդիւնաբերութեան մանրամասնութիւնների ուսումնասիրութեամբ»։

—

Երևանից մեզ գրում են, որ սեպտեմբերի 2-ին Դարաչիչագում վախճանվեց Երևանի փոխ-նահանգապետ պ. Ջիխօվսկի»։

—

Սեպտեմբերի 3-ին, երեկոյեան Թիֆլիսի երկաթուղու արհեստանոցը հրդեհի զոհ եղաւ։ Վնասը հարիւր հազարից անցնում է։ Հարիւրաւոր մարդիկ այդ հրդեհի պատճառով երկար ժամանակ անգործ պիտի մնան։

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են. «Այս օրերս վախճանված վաճառական Յովհաննէս Շահբազեանի եղբայրները ի յիշատակ հանգուցեալի նուիրեցին տեղական հայոց դպրոցին 200 րուբլի»։

—

Մեզ տեղեկացնում են, որ Նուխում և Զանգեզուրի կենտրոնում՝ Գորիսում մտադրութիւն կայ հիմնելու ժողովրդական էժանագին գրադարաններ։ Նախաձեռնողները տեղական ինտելիգենտ երիտասարդներն են։ Ցանկանալով աջողութիւն, ցանկանում ենք մի և նոյն ժամանակ այդ միտքը որքան կարելի է շուտ իրագործված տեսնել։

—

Պետերբուրգի սինօդը երկու տարի առաջ, իբրև փորձ, հոգևոր սեմինարիաներում մտցրել էր դասաւանդելի առարկաների թւում և բժշկականութեան սկզբունքները։ Փորձն այնքան աջողակ հետևանքներ ունեցաւ, որ այժմ առաջարկված է, այս ուսումնական տարուց սկսած, մտցնել բժշկականութեան սկզբունքների դասաւանդութիւնը առանց բացառութեան, պետութեան բոլոր սեմինարիաներում։

—

«Սոխակ Հայաստանի» երգարանի հրատարակիչ Գրիգոր քահանայ Գրիգորեանց Բագուից մեզ խնդրում է յայտնել, որ արդէն լոյս տեսաւ «Ջարկեարի Քնարը» և այս օրերս կուղարկվի բաժանորդներին։

—

Անդրկասպեան երկրում արդէն մի քանի փորձեր են եղել լաւ ծխախոտի կանոնաւոր մշակութեան համար, և փորձերը միանգամայն աջողվել են։ Յոյս կայ, որ ծխախոտի մշակութիւնը այդ երկրին մեծ օգուտներ կը տայ։

—

Մեզ հաղորդում են, որ վերջին ժամանակներս գաւառական զանազան տեղերում և գիւղերում տեղական ոստիկանութիւնը և իշխանութիւնը շատ են հոգում բնակիչների սանիտարական դրութեան մասին։ Տրվում են զանազան սանիտարական հրահանգներ, նշանակվում են սանիտարական մասի հսկողներ,—բայց և այնպէս արդիւնքը շատ աննշան է, որովհետև ինքն ազգաբնակութիւնը համարեա թէ աւելորդ է համարում առողջապահական պայմանների համեմատ ապրելը և մաքրութեան վրա նայում է իբրև շռայլութեան վրա։ Մեր գիւղական հասարակութեան մէջ չը կայ ինքնագործունէութիւն, և այդ դէպքում հրահանգները, ի հարկէ, իրանց նպատակին չեն հասնի։

—

Մեզ ուղարկված է մի գրքոյկ, որը կրում է «Ամրահ և Սալվի» վերնագիրը։ Դա ժողովրդական մի հեքիաթ է, որ գրի է առել Աշըղ Սազալի, և հրատարակել է Ս. Բաբիկեանի Նոր-Բայազէտում գոյութիւն ունեցող «Գեղարքունիք» գրադարանը։ Գովելի է միանգամայն, որ գաւառական մի համեստ գրադարան, բացի տեղացիներին ընթերցանութեան նիւթ մատակարարելուց, դեռ աշխատում է գրքեր էլ հրատարակել։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի Հաւլաբար թաղի Էջմիածնեցոց եկեղեցու ծխականների մէջ այժմ շատ է խօսվում այն մասին, թէ ով պիտի լինի նոր քահանան այն քահանայի փոխարէն, որը այս օրերս վախճանվեց։ Ծխականները զանազան կուսակցութիւնների են բաժանված, և ամեն մի կուսակցութիւն իր թեկնածուն ունի։ Մեզ չեն հետաքրքրում անձնաւորութիւնները. Կիրակոսը կը լինի քահանայ թէ Պետրոսը, այդ հետաքրքրական չէ։ Հետաքրքրականն այն է, որ քահանայացուն արժանաւոր լինի։ Եւ պատիւ կը բերի այդ եկեղեցու ծխականներին, եթէ նրանք մի կողմ դնելով խնամութիւնը, քահանայ ընտրեն նրան, ով աւելի արժանի է։ Իսկ թէ ով է այդ արժանաւորը, այդ իրանք ծխականները կարող են որոշել, եթէ միայն խղճմտանքով և արդարամտութեամբ նայեն հարցի վրա։

—

Կ. Պօլսից մի մասնաւոր նամակով մեզ գրում են. «Օգոստոսի 28-ին մի քանի թերթեր հրատարակեցին թէ՝ կայսերական իրադէով հաստատուած է յանձնաժողով մը, որ պիտի քննէ յունաց և հայոց պատրիարքարաններու խնդիրներն։ Այդ յանձնաժողովի կը մասնակցեն Սավֆա փաշա (յոյն), Արթին փաշա Տատեան և երկու թիւրքեր. իսկ նախագահն է դատական գործոց պաշտօնեայ Րիզա փաշա»։

—

«Արևելքի» մէջ կարդում ենք. «Ուրախ ենք յայտնելու, թէ «Արևելքի» սիւնակներու մէջ «Քնար» ընկերութեան ուղղեալ կոչն, օգնութեան ձեռք կարկառելու համար ռուսահայ երգչուհւոյ մը՝ օրիորդ Մառի Մսերեանցի, որ անօք անօգնական մնացած է մայրաքաղաքիս մէջ, անարձագանք չէ մնացած։ «Քնար» ընկերութեան անդամները մարդասիրաբար ամեն միջոցներ ձեռք առած են՝ օրիորդին նիւթական ապրուստն ապահովելէ զատ, անոր եղական ձայնին կրթութեան ու զարգացման համար։ Աւասիկ տնօրինութիւն մը, որ պատիւ կը բերէ այդ համակրելի ընկերութեան»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կ. Պօլսի բոլոր լրագիրները օգոստոսի 8-ին հրատարակել են Թիւրք կառավարութեան կողմից ուղարկված հետևեալ պաշտօնական յայտարարութիւնը.

«Սպարապետի Դրան մէջ գումարեալ Զինուորական Ատեանն արձակած էր իւր վճիռն այն անձանց նկատմամբ, որք Գուրպան Պայրամին առաջին օրը, կիւրակի, ի Գումգաբու Հայոց Պատրիարքարանին ու դէմը գտնուած եկեղեցւոյն մէջ հաւաքուելով հպատակութեան հանգամանաց հակառակ անպատեհ վարմանց մէջ գտնուիլ համարձակած էին։

Ասոնցմէ և այս դէպքի պարագլուխներէն Արթին Ճիհանկիւլեան մահուան դատապարտուած է, որովհետև օսմանեան հպատակները օսմանեան կառավարութեան դէմ ապստամբեցուցած է և ձեռնարկած է օսմանեան երկիրներու մէկ մասը կառավարութեան իշխանութենէն հանելու։

Սեբաստացի Արթին Նաթօրեան՝ դատապարտուած է տասն և հինգ տարուան բերդարգելութեան յԱքեա։

Սեպաստացի Նազարէթ՝ նոյնպէս տասն և հինգ տարուան բերդարգելութեան ի Մոսուլ։

Յոյն Նիքոլա՝ տասն և հինգ տարուան բերդարգելութեան ի Սինոպ։

Աւետիս և Քէօթահեացի Պարոն՝ հինգ տարուան բերդարգելութեան ի Սինոպ։

Երզնկացի Կարապետ՝ հինգ տարուան բերդարգելութեան ի Քիոս։

Յոյն Եուան՝ հինգ տարուան բերդարգելութեան ի Բայաս։

և Խաչիկ՝ հինգ տարուան բերդարգելութեան ի Լէմնի։

Զինուորական Ատեանն անպարտ արձակած է այս դէպքի առթիւ իբրև ամբաստանեալ Ոստիկանութեան Դուռը ղրկուած տասն և վեց անձեր։

Այս վճիռ, որոշմամբ Նախարարաց Խորհրդոյ, վեհ. Սուլթանին մատուցուած ըլլալով, Ն. Վեհափառութիւն բարեփոխած է Արթին Ճիհանկիւլեանի համար որոշուած պատիժը հրամայելով, որ ցկեանս չղթայակապ աշխատութեան դատապարտուի յԱքեա։ Իսկ միւս անձանց համար ևս հրամայած է գործադրել Զինուորական Ատենին վճիռը։

Այն անձինք, որք կառավարութեան մը հպատակն իւր գերիշխան պետութեան դէմ կապստամբեցնեն և կամ կը ձեռնարկեն տէրութեան երկրին մէկ մասը կառավարութեան իշխանութենէն հանել, մահուան կը դատապարտուին և ամեն երկրի մէջ բնականաբար այս պատիժ կը գործադրուի. և թէև այս անգամուան համար Արթին Ճիհանկիւլեան բարձրագոյն ներման արժանացած է, սակայն կայս. Իրատէ մը բացարձակապէս հրամայած է, որ եթէ օսմանեան երկիրներու որ և է մասին մէջ անգամ մըն ալ այս տեսակ դէպք մը պատահի, հեղինակներն անմիջապէս ձերբակալուելով Զինուորական ատենի մը պիտի յանձնուին և այս վերջնոյն կողմէ ըստ օրինի վճռուած պատիժներն ամբողջովին պիտի գործադրուին առանց ներուելու և մեղմուելու։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լօնդօնի լրագիրները խօսելով Վիլհելմ կայսրի Ռուսաստան գնալու մասին, այն կարծիքն են յայտնում, որ այդ ճանապարհորդութիւնը գործնական հետևանք չունեցաւ։

—Դքսուհի դ'Իւզլէ այս օրերս յայտնում է, որ գեներալ Բուլանժէ նրանից զանազան ժամանակներում ստացել է մօտ երեք միլիօն ֆրանկ։ Իր նամակների մէջ Բուլանժէ հաւատացնում է եղել դքսուհուն, որ ինքն գործում է միապետութիւնը վերականգնեցնելու համար։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Պարիզից հաղորդում են Ալէքսանդր-Շատրիան վիպասանի մահուան մասին։ Ալէքսանդր-Շատրիան երկար տարիների ընթացքում Էրկման-Շատրիան յայտնի գրականական ֆիրմայի ընկերակիցն էր, որը վերջին ժամանակներս քանդվեց, ընկերակիցների մէջ ծագած տարաձայնութիւնների պատճառով։ Միասին գրող երկու վիպասաններն էլ ծնվեցան Էլզասում և երկրորդ կայսրութեան ժամանակ մեծ աջողութիւն ունեցան ոչ միայն Ֆրանսիայում, այլ և Գերմանիայում և Շվէյցարիայում։ Ընթերցողները մանաւանդ հաւանում էին գիւղական կեանքից գրած նրանց վէպերը։ Երբ Էլզասն անցաւ Գերմանիայի ձեռքը, երկու վիպասաններն ևս սաստիկ շօվինիստներ դարձան և կորցրին իրանց ժողովրդականութիւնը։ Ալէքսանդր Շատրիան ծնվեց 1826 թւին։ Նա իր մայրենի քաղաքի դպրոցի ուսուցիչ էր և 1858 թւին ընկերացաւ Էրկմանի հետ, որը չորս տարով մեծ է նրանից։ Նրանց առաջին գրուածների վրա ոչ ոք ուշադրութիւն չը դարձրեց։ Միայն «Revue nouvelle»-ի մէջ տպած նրանց «L'illustre docteur Mattheus» վէպով յայտնի դարձան և հռչակ ստացան, որը հետզհետէ աճում էր։

⁂

Յունաստանում ոչ մի ամառ չէ անցնում առանց հրդեհների այն պատճառով, որ գիւղական ազգաբնակութիւնը կրակ է տալիս անտառները, որպէս զի ձմեռը արածացնելու լաւ տեղ պատրաստէ իր անասունների համար։ Բայց ոչ մի ժամանակ այնպիսի սարսափելի հրդեհներ չեն եղել,—հաղորդում է հեռագիրը,—որպէս այս ամառը։ Այրվում էին ոչ միայն Աթէնքի անտառապատ շրջակաները, այլ և Պէլոպօնէսում, Խալկիդում և զանազան կղզիների վրա այրվում էին անտառներ։ Պարնասը, Գէլիկօնը, Պէնտէլիկօնը և Գիմմէտը բոցավառված էին և Աթէնքը շրջապատված էր կրակի օղակով։ Հրդեհը սկսվեց Դիօնիսի անտառում՝ Պէնտէլիկօնի զառիվայրերի վրա։ Դժբաղդաբար Ատտիկայում այդ ժամանակ այնպիսի քամի էր, որ Աթէնքի փողոցներում անցուդարձ անողները հազիւ կարողանում էին ոտների վրա կանգնել։ Հրդեհը հսկայական քայլերով էր տարածվում։ Երեք օր կրակի բոցավառ լեզուները բարձրանում էին, և այդ երեք օրվայ ընթացքում Աթէնքում սպանիչ տօթ էր կանգնած։ Երկինքը ծածկված էր դեղնագոյն ծխով, որի միջից երկինքը կարծես կորցրել էր իր փայլը։ Թէպէտ և քաղաքը չորս մղոն տարածութեամբ հեռու է հրդեհից, սակայն Աթէնքում անձրևի պէս թափվում էին այրվող տերևներ և ծուխ դարձած ծառի ճիւղերը։ Աթէնքի ամբողջ բերդապահ զօրքը գործում էր հրդեհի դէմ։ Այրված անտառները ոչ միայն հարուստ էին ծառերով, այլ և բազմաթիւ փեթակներով։

⁂

Պասսիում հիմնվում է «մեծ մարդկանց գործարան»։ Այդ հիմնարկութիւնը, որի մասին դեռ մտածում էր հանգուցեալ Թիէր, նշանակված է որպէս ապրելու տեղ միջոցներից զուրկ երիտասարդների համար։ Տիկին Դօն վճռեց իրագործել Թիէրի այդ միտքը և այժմ այդ տիկնոջ հողի վրա մի մեծ շինութիւն է կառուցվում, որի մէջ եկող տարվայ վերջից կարող են երեք տարի շարունակ ապրուստ և բնակարան ունենալ 12 ամենատաղանդաւոր երիտասարդներ։

⁂

Անգլիական հռչակաւոր բժիշկ Մօրիէլ Մէկէնզի, առողջութիւնը վերականգնելու համար, մի քանի շաբաթ կանցկացնի Ղրիմում։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 սեպտեմբերի։ Երէկ առաւօտեան Թագաւոր Կայսրը, Թագուհի Կայսրուհին, Թագաժառանգը, Մեծ իշխանուհի Կսենիա Ալէքսանդրովնան, Մեծ իշխաններ Վլադիմիր Ալէքսանդրովիչ և Նիկոլայ Նիկոլայեվիչ կրտսերը եկան Սպալա։

ԼՕՆԴՕՆ, 4 սեպտեմբերի։ «Память Азова» նաւը, որի վրա է գտնվում Մեծ Իշխան Գէօրգի Ալէքսանդրովիչ, եկաւ Պիրէուս։

ԽԱՐԿՕՎ, 5 սեպտեմբերի։ Վերջին տիրաժի

խաղարկութեան տոմսակի 200,000 րուբլ ընկաւ այստեղի բժիշկ Միխայլովի կնոջը։

ՎԻԷՆՆԱ, 5 սեպտեմբերի։ Կայսրը ճանապարհ ընկաւ Վիէննայից, ուր նա ներկայ էր զօրախաղերին, Բօշտօկ ամրոցը, Սիլէզիայում, գերմանական կայսրի հետ տեսակցելու համար։

ԶԱՆԶԻԲԱՐ, 5 սեպտեմբերի։ Էմին-փաշա վերադարձաւ միջին Աֆրիկայից, նուաճելով Ունիամվէզի անունն կրող ահագին շրջանը։

ԲԵՐԼԻՆ, 5 սեպտեմբերի։ Երէկվայ ճաշի ժամանակ, 1814 թւի օգոստոսի 16-ի կատցբախեան կռուի դաշտի վրա եղած զօրախաղերից յետոյ, Վիլհէլմ կայսրը մի ճառի մէջ յիշեց այդ կռուին մասնակցող Սակէն և Լանժէրօն ռուս հերոսների մասին։

ԳՐԷՆԱԴԱ, 5 սեպտեմբերի։ Ալգամբրայում հրդեհ ընկաւ։ Երկու բակեր համարեա ոչնչացրած են. պալատի մնացած մասը ազատեցին։ Հրդեհը չարամիտներին են վերագրում։ Դատաստանական քննութիւն է կատարվում։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Սեպտեմբերի 4-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ. . .	76 ր.	90 կ.
Բերլինի վրա 100 մարկ — . . .	37 »	75 »
Փարիզի վրա 100 ֆրանկ — . . .	30 »	40 »
Ոսկի — — արժէ . .	6 »	16 »
Մաքսային կուպոններ — . . .	123 »	50 »
Արծաթ — — — . . .	1	12 »
Բօրսային դիսկօնտներ — . . .	5 և	$6\frac{1}{2}\%$ »
Պետ. բանկի 5% տոմս 1-ին շրջանի.	100 »	87 »
— — — — 2-րդ —	100 »	— »
— — — — 3-րդ —	100 »	— »
— — — — 4-րդ —	100 »	25 »
— — — — 5-րդ —	100 »	— »
— — — — 6-րդ —	100 »	— »
6% ոսկեայ փոխառութիւն	136 »	75 »
4% ոսկեայ ռէնտա	— »	— »
Արևելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	101 »	75 »
— — — 2-րդ —	101 »	75 »
— — — 3-րդ —	102 »	25 »
Ներքին 5% առաջին փոխառութ.	227 »	— »
— — երկրորդ —	213 »	— »
— — երրորդ ազն. կալ. բ.	212 »	50 »
Պետական. երկաթուղային ռէնտա .	101 »	12 »
$5\frac{1}{2}\%$ ռէնտա	103 »	75 »
5% ներքին փոխառութիւն	87 »	50 »
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	100 »	50 »
4% վկայակ. գիւղ. հող. բանկի. .	103 »	75 »
$4\frac{1}{2}\%$ գրաւական թղթեր կալուած.		
փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ. .	— »	— »
— — — թղթադ.	97 »	87 »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.		
ընկերութեան օբլիգացիները. .	97 »	12 »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	95 »	75 »
Օդէսայի — — .	95 »	50 »
Թիֆլիսի — — .	— »	— »
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	— »	— »
— — Քութայիսի — — .	— »	— »

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը հանդարտ է։

Ժամանակաւոր խմբագիր Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆՑ

Հրատարակիչ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՂԶԼԱՐԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԸ հրաւիրում են վայելչագրութեան, գծագրութեան ուսուցիչ 20 դասով և վերակացութիւն արականում. առաջին կարգով։ Դիմել հոգաբարձութեան։ 1—3

Լոյս տեսաւ

ԱՄՐԱՀ ԵՒ ՍԱԼՎԻ

Գրի առաւ աշըղ Սավայի, դիմել հետևեալ հասցէով. Ново-Баязетъ, С. Батикяну։ Գինն է 30 կոպէկ։ 1—4

Չը նայելով մեզ վնասելու նպատակով եղած փորձերին, մենք մեծ դժուարութիւններով հանգուցեալ Րաֆֆիի հեղինակութիւններից մի քանիսի թարգմանելը աշխատեցինք գլուխ բերել ռուսերէն և վրացերէն լեզուներով։ Այդ թարգմանութիւնները շուտով մամուլի տակ են մտնելու։ Այլ և սրանցից ֆրանսերէն, գերմաներէն և անգլիերէն լեզուներով ևս թարգմանելու պատրաստութիւններ ենք տեսնում։ Իսկ հեղինակի մնացած գրվածներից թարգմանել կամ հրատարակել ցանկացողը՝ պայմանների մասին պէտք է ուղղակի մեզ դիմեն։ Մեր հասցէն պօստատանը յայտնի է։ 3 սեպտ. 1890 Թիֆլիս.

Մակար Զմշկեանց. 1—1

ԳԵՂԱԳԻՐ ԱԼԲՈՄ

Մի գեղեցիկ գործ և ամեն հայ ընտանիքի հիւրասենեակի զարդ
լոյս կը տեսնի կարճ ժամանակում
ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ ՏԻԿԻՆ ՄԱՐԳԱՐԻՏ ԱԼԵՔՍԱՆԵԱՆԻ
բաժանորդագինը 1—50 կ., ալբօմը լոյս տեսնելուց 2 ր., փառակազմ 3 ր.

Բաժանորդագրութիւնը ընդունում է «Աղբիւրի» և «Տարազի» խմբագրութիւնը։ 4—10

ԳԱԼՈՒՍՏ ԱԼՈՅԵԱՆՑԻ

„ԿՈՎԿԱՍ“

Զինագործարանը յանձնարարութեամբ պատրաստում է որսորդական ամեն կարգի նորաձև հրացաններ, ինչպէս են կենտրոնահար (центральнаго боя) և լցնովի (шомпольное) հրացաններ՝ ողորկ և կամ պտուտակաւոր փողերով, նմանապէս Մօնտէ-Կրիստօ կոչված կարաբիններ։

Զինագործարանը նորոգում է ամեն տեսակ ատրճանակներ, հրացաններ և ձևափոխում է հրացանների սիստեմները։

Զինագործարանը ունի առանձին բաժանմունք երկաթա-փականագործական և ճախարակա-մեքենագործական աշխատութիւնների համար. և պահում նոյնպէս մասնագէտ վարպետ կարի մեքենաների վերանորոգութեան համար։

Դիմել. ТИФЛИСЪ, Солдатскій базаръ, оружейная мастерская „Кавказъ“
Галусту Алоянцъ.
7—10

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ն Ե Ր

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է ընդհանուր տեղեկութեան, որ սոյն թւից վարչութեան շէնութեան մէջ ամեն օր, 9 ժամից մինչև 2 ժամը կէսօրից յետոյ, կարելի է տեսնել ՔԱՂԱՔԱՅԻՆ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ 1891—1894 թւերի քառամեակի համար։ Այն անձինք, որոնք անկանոն կերպով մտցված կը լինեն ցուցակների մէջ կամ բոլորովին դուրս թողված, իրաւունք ունեն ներկայացնել վարչութեանը իրանց առարկութիւնները մինչև այս սեպտեմբերի 21-ը, և ապա այդ առարկութիւնները կառաջարկվեն դումային։ 2—3



Օգոստոսի 7-ից 1890 թ. բացվում է երաժշտական գործիքների և նոտաների կովկասեան կենտրոնական դէպօ։

ԵՂԲ. ԴԻՏԷՐԻԽՍԻ
առաջին ս. պետերբուրգեան դաշնամուրային գործարանի

ՌՕԵԱԼՆԵՐ ԵՒ ՊԻԱՆԻՆՕՆԵՐ

Կ. Մ. Շրէդէրի, Բէկկէրի, Սմիդտի, Միւլբախի



Գէտցի, յայտնի արտասահմանեան գործարանների՝ Շիդմայէրի, Բլիւտների, Բէխշտէյնի։ Գլավաչի արմօնպիանօ։ Շիդմայէրի հարմօնիումներ։ ԾԱԽՎՈՒՄ Է ԵՒ ՎԱՐՁՈՎ ՏՐՎՈՒՄ։ Թիֆլիս. Դվօրցօվայա փողոց, Թիֆլիսի ազնուականների կալուածական բանկի տան մէջ։ 4—15

ԴՊՐՈՑ ԲԱԳՐԱՏ ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ

Թոշակաւոր, կիսաթոշակաւոր և երթևեկ աշակերտների ընդունելութիւնը կը սկսվի օգոստոսի 20-ից, իսկ ուսումը սեպտեմբերի 3-ից։ Երեխաներին պատրաստում է պետական բոլոր դպրոցների համար։ Հասցէն. Сололаки, противъ Гановской ул. на Садовой, № 38. 5—5

ՄԻ ՕՐԻՈՐԴ

որ աւարտել է իգական գիմնազիան, պատրաստում է աշակերտներ և աշակերտուհիներ գիմնազիաների ստորին դասարանների համար։ Համաձայն է և կրկնողութիւններ անել։ Կարող է պարապել նոյնպէս և հայերէնից փոքրերի հետ։ Հասցէն կարելի է իմանալ Տէր Յովսէփեանի ծխախոտի խանութում, „Кавказъ“ հիւրանոցի տակ։ 2—5

ՀԱՐԿԱՒՈՐ է ռուսաց լեզուի մի ուսուցիչ Ախալքալաքի դպրոցի համար։ Ցանկացողները պէտք է մինչև ՀԻՆԳ ՕՐ յայտնեն իրանց համաձայնութիւնը։ Պէտք է դիմել այս հասցէով. Михаилу Саакянцу, Мало-Орбеліановская № 26. 2—2

ԵՐԿՈՒ ՕՐԻՈՐԴ կամենում են ապրել մի հայ ընտանիքում լաւ վարձատրութեամբ։ Ցանկացողները կարող են իրանց հասցէն թողնել „Մշակի“ խմբագրատանը։ 2—5

ՄԻ ՕՐԻՈՐԴ

Որ եղել է հայոց դպրոցում, ապա իր ուսումը աւարտել է Թիֆլիսի ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ դպրոցում, և մտցրած է վարժուհիների ցուցակի մէջ, կամենում է վարժուհու պաշտօն ունենալ հայոց դպրոցներից մէկում։ Կաւանդի ՁԵՌԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ, համաձայն է պարապել ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻՑ ԵՒ ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ։ Ցանկացողները կարող են դիմել այս հասցէով. Тифлисъ, (Авлабаръ), Эчміадзинская улица, собст. домъ, № 23, Екатеринѣ Цовяновой. 2—3

ՄԻ ԸՆՏԱՆԻՔ ընդունում է գիշերօթիկ աշակերտներ մատչելի գներով։ Աշակերտների հետ կրկնութիւններ կանեն։ Նոյն տեղը կարելի է ֆրանսերէնի և գերմաներէնի դասեր վերցնել։ Հասցէն. Авчалская площадь, домъ Исарлова, квартира Лункевича. 2—10



Մ. Գ. ՑԷՑԼԻՆԻ

ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐԻ ՄԱԳԱԶԻՆԻ

ՕՊՏԻԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ

Պալատի այգու դիմաց, անկիւնի մագազինում, ստացված է մեծ ընտրութիւն՝ ոսկեայ, նոր ոսկեայ, նիկելեայ, պողպատեայ և կրիայի ոսկորից ԱԿՆՈՑՆԵՐ, ՊԷՆՍՆԷՆԵՐ և ԼՕՐՆԷՏՆԵՐ։ Թատրօնական և դաշտային ԲԻՆՕԿԼՆԵՐ, ՋԵՐՄԱՉԱՓԵՐ, թէ սենեակների, թէ դուրսը կախելու և թէ վաննաների համար։ Վերաստուգված և վկայական ունեցող ՄԱԿՍԻՄԱԼ ջերմաչափեր։ Լօրնէտի և պէնսնէի համար ոսկեայ, արծաթեայ, նոր-ոսկեայ շղթաներ, նմանապէս մետաքսեայ և մետալական թելեր։



Ակնոցներ և պէնսնէներ տրվում են նմանապէս բժիշկների պատուէրով։

Մագազինում յանձն են առնում նմանապէս փչացած իրերի նորոգելը և ապակիների դնելը։

ԳՆԵՐԸ ամենաչափաւոր են։

31—50 (Հ)

ՊՐՕՎԻԶՕՐ **Ա. ՇՏԷԽԷՐԻ** ՄԻՋՈՑՆԵՐԸ
ԱՏԱՄՆԵՐԻ ՑԱՒԻ ԵՒ ՓՉԱՆԱԼՈՒ ԴԷՄ

ՊՕԴՕԼԵԱՆ ԱՏԱՄՆԱԴԵՂ ԿԱԹԻԼՆԵՐ 50 ԿՈՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՕԿԱՅԻՆԵԱՆ ԱՏԱՄՆԱՅԻՆ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՈՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՅԻՆ ՓՈՇԻ 30 ԿՈՊ.

ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ. ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ դեղագործական ապրանքների կովկասեան ընկերութեան մէջ և պ. պ. Շահպարոնեանցի, Մակկէրի, Սէնչիկովսկու և Ագմուրովի դեղատներում։

Зубныя капли: кор. 50 к.
Зубной порошокъ: кор. 30 к.
Зубной эликсиръ: фл. 80 к.
А. Штехеръ

26—52 (Հ.)

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Նագօրնայա փողոց, № 9)

Ցանկացողք, ունենալ իրանց առևտրական գործերի համար, սոյն յունիս ամսում ուսման ընթացքը աւարտած ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ԵՒ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնողին, Ս. Մանուէլեանցին։ Աւարտողները ստացել են մասնագիտական առևտրական կրթութիւն, կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հաստատված ծրագրի համեմատ, և ունեն օրինաւոր ատտեստատներ։

Ընդունելութիւնները սկսվելու են սեպտեմբերի 1-ից։ Կուրսերի ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Ծովիանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, учредителю курсовъ С. П. Мануэльянцу. 6—12 (Հ)

ՄԻ ԸՆՏԱՆԻՔ

Ընդունում է գիշերօթիկներ՝ թէ աշակերտներ և թէ աշակերտուհիներ. նոյն տեղը և կրկնողութիւններ են անում։ Հասցէն կարելի է իմանալ „Աղբիւրի“ խմբագրատանը։

ВЪ БЛАГОРОДНОМЪ

семействѣ принимаютъ на полное содержаніе учащихся въ учебныхъ заведеніяхъ мальчиковъ и дѣвицъ; такъ-же репетируютъ таковыхъ. Спросить адресъ въ редакціи журнала „Агбюръ“. 3—5

Дозволено цензурою, Тифлисъ 5 Сентября 1890 г.
Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.